

8-93

L-67

150


ԲՏԿԻԿԿԵ.

1902

85

L-67

1902



8-93
4-67
www

ՀԵՆՐԻԷՏՍՈՒ ՎԻՏՆՈՒ

Թ Մ Փ Ն Ի Կ Ը

Թարգմանից

Օր. Ղ. Ց. - Ն.

1007
32822
9

912003



Թ Ի Փ Ն Ի Ս

ТИФЛИСЬ

Տպարան Կ. Մարտիրոսյանցի

Типография К. Мартиросянца

Орбеліановская ул., № 1-2


1902



Дозволено цензурою, въ Тифлисъ, 30-го Ноября 1901 г.

Թ Մ Ք Լ Ի Ա Բ

I



Խնձորենու տակ խոտի մէջ կանգնած է Թմիլիկը: Սա մի ծիծաղաշարժ փոքրիկ մանուկ է: Նա դեռ վեց տարեկան էլ չկայ:

Նրա ոտները հաստ են և կարճ, իսկ թշերը կլոր ու կարմիր:

Թմիլիկի իսկական անունը Օննիկ է. Օննիկը շատ է սիրում խնձոր ուտել, բայց մայրիկին աւելի է սիրում: Նա սիրում է նոյնպէս նստել մայրիկի ծնկներին, թէև մայրիկը միշտ ասում է, որ մի տղայ, երբ արդէն հագնւում է մեծ մարդու պէս, չպէտք է այլ ևս նստի մօր ծնկներին:

Թմիլիկը սիրում է և հայրիկին, բայց բարոյվին ուրիշ ձևով: Նա սիրում է հայրիկի վրայ նստել հեռուից, գուցէ այն պատճառով, որ հայրիկից երբէմն աստակներ է ստանում, երբ աստակ չարութիւն է անում:

Թմփլիկը ամենևին չէ վախենում իրանց սև ճիւղ և շատ սիրում է նստել նրա լայն թիկունքի վրայ, երբ նա հանդարտ քալում է իրանց տան առաջ:



Նա սիրում է նոյնպէս իրանց կովին և ճագարներին, որոնք գտնւում են վանդակի սէջ: Թմփլիկը ամեն անգամ ճագարներին վանդակի մէջ տեսնելիս մտածում է, մեզք չեն սրանք, որ այսպէս վախուած են,

և միշտ ինքն իրան ասում է, որ լաւ բան չէ խեղճերին բանտարկել մի այսպիսի փորրիկ տեղում: /

Մի անգամ նա ծածուկ բաց արաւ վանդակը և դուրս թողեց նրանց: Նա սրա համար հորից մի քանի ապտակներ ստացաւ և սկսեց դռննազին լալ, սակայն ոչ այնքան ապտակների համար, որքան ճագարների, որոնցից երկուսը, փախան և այլ ևս չվերադարձան:

Փորրիկ ծիտերին Թմփլիկը նոյնպէս շատ և շատ սիրում է: Մի անգամ մի մեծ տղայ սրկսեց ջար խփել այս փորրիկ թռչուններին: Օն-

նիկը սաստիկ բարկացաւ, ընկաւ այդ տղայի լետուից, նրա երեսը կարմրեց, նա մի քար վերցրեց ու խփեց չարագործին:

Իսկ ամենից շատ և ամենից աւելի նա սիրում է իր եղբորը, չարածճի Արամին: Արամը բոլորովին մեծ տղայ է. նա տասը տարեկան է և արդէն առաջին դասատանն է: Նա շատ ճար-



պիկ տղայ է: Նա կարողանում է մի ամբողջ գիւր կարգալ, աւազի վրայ պատկերներ նկարել, օրինակ՝ նկարում է հայրիկի, մայրիկի, ուսուցչի, պահապանի և զանազան գիւղացի երեխաների պատկերներ:

Նա կարողանում է և բարձրանալ խնձորենու վրայ, շուրի ածել. կարողանում է կանգնել ձեւերի վրայ, զուբը դէպի ներքե, և էլի շատ և շատ այսպիսի բաներ է անում, որ դեռ Թմփլիկը չէ կարողանում: /

Արամը Տիգրան անունով մի ընկեր ունի:

Մի անգամ նրանք գրազ եկան, թէ ով կարող է շատ խնձոր ուտել: Պայմանը այսպէս էր. երկուսն էլ պէտք է սկսէին խնձոր ուտել երեկոյեան վեց ժամից սկսած, իսկ միւս օրը առաւօտեան պէտք է միմեանց ասէին, ով քանիսն է կերել: Տիգրանի քոյրը և Թմիլիկը պէտք է հսկէին, որ գործը կատարուէր առանց խաբելու:



Միւս օրը Արամը առաւօտեան վաղ վերկացաւ: Թմիլիկը, ի հարկէ, նոյնպէս վաղ վերկացաւ. չէ՞ որ նա պէտք է ներկայ գտնուէր իր եղբոր չաղթութեան: Օննիկը հաւատացած էր, որ գրազը անպատճառ Արամը կըտանի: Վիճողները պէտք է հանդիպէին միմեանց կամուրջի մօտի մեծ ծառի տակ:

Երբ Արամը հեռուից տեսաւ Տիգրանին, որ զարթ տր էր իր բոջ հետ, բարձր ձայնով կանչեց. — Քանի՞սը:

Տասն և երկուսը — պատասխանեց Տիգրանը: — Տասն և երեքը — չաղթական ձևով գոռաց Արամը:

Իսկ այդ միջոցին Թմիլիկը կանգնած էր նրանց մօտ և ուրախութիւնից ու սաստիկ վագելուց հազիւ էր կարողանում շունչ քաշել:


Մի քանի ժամանակից յետոյ, երբ Արամը և Տիգրանը ուսումնարանումն էին, Թմիլիկը ուղեւորուեց այդին և սուս ու փուս նըստեց խնձորենու տակ խոտի մէջ: Մայրիկը



լուսամուտից նայեց և նկատելով նրա մտախոհ դէմքը, ասաց, «տեսնես, էլ ի՞նչ չարութիւններ է հնարում մեր Թմիլիկը»:

Երբ ժամը տասներկուսին Թմիլիկը միւսների հետ ձաշի նստեց, այն ժամանակ ամենքը տեսան, որ նա տխուր է և ոչինչ չէ ուտում: ձաշից յետոյ էլ նա ամբողջ ժամանակը լուս էր: Մայրը նկատեց, որ նա սկսեց է և տակեցրեց անկողնու մէջ:

Բայց ոչ որ չիմացաւ նրա հիւանդանալու պատճառը: Երբ հայրը և մայրը գուրս եկան սենեակից, և նա մենակ մնաց Արամի հետ, աւսաց.



—Արամ, դու տասներեք խնձոր կերար, իսկ ես այսօր կերայ տասն և չորսը և այժմ տեսնում ես, հիւանդացել եմ:

Բարեբաղտաբար իսկոյն միջոցներ ձեռք առան և Օսնիկը շուտով առողջացաւ:

Մայրն, երբ իմացաւ Թմիլիկի հիւանդանալու պատճառը, շատ բարկացաւ և հրամայեց մի շարաթ շարունակ խնձոր չուտել:

Ահա՛, այդ պատճառով էլ Թմիլիկը կանգ-

նած է այժմ խնձորենու տակ և շատ լուրջ գէմք է ընդունել:

Նա այնպէս սրտով ուզում է խնձոր ուտել, որ խնձոր տեսնելիս նրա բերանի ջուրը գնում է. գոնէ մի հատ թույլ տալին ուտել, մի փոքրիկ խնձոր:



Բայց նա խոստացել է չուտել, մինչև անգամ ձեռք չտալ խնձորին և այդպատճառով էլ ձեռքերը թագցրել է լետևում: Իսկ խնձորն իրին նայել և հիանալ արգելուած չէր նրան: Տե՛ս, տե՛ս, ի՞նչ գեղ-

եցիկ, ի՞նչ կարմիր են խնձորները և ս՛րբան գրաւիչ են:

Ահա՛, Արամն ու Տիգրանը գալիս են ուտում նարանից: «Ինչի նրանք այսօր այսպէս կամաց են գալիս,» մտածում է Օսնիկը: Եւ ի՞նչպէս երկուսն էլ տխուր են. Արամը, կարծեմ մինչև անգամ լալիս է: Ա՛յ, ա՛յ, ա՛յ, ա՛յ ի՞նչ է պատահել:

Անկաշի է, արցունքները կու տալով
ասում է Արամը և փուռում խոտի վրայ:

— Ի՞նչու ես լալիս, Արամ, կարեկցարար
հարցրեց Օննիկը, վազելով եղբոր մօտ, ասա՛,
տեսնեմ, ի՞նչ է պատահել:



— Էհ, հեռացիր, մի
ձանձրացնիր, պատասխանեց
նա:

Թմփլիկը մտածմունքի
մէջ ընկաւ: Երևի Արամին
մի մեծ դժբաղ տուժիւն է
պատահել, ասում էր նա
ինքն իրան:

Եւ լանկարծ նա զգաց. որ իր կոկորդն էլ
սեղմուում է և ինքն էլ ուզում է լաց լինել:

— Տիգրան, Արամը ինչո՞ւ
է լալիս, հարցրեց Օննիկը:


— Գիտես, Արամը այսօր
դասի ժամանակ սեղանի
վրայ նկարում էր զանա-
զան բաներ պատասխանեց
Տիգրանը: Նկարեց և թո
պատկերը և այնքան նման,
որ տեսնէիր, կը հիանայիր:

Տիգրանը աչս ասելով
սխտեց ծիծաղել, իսկ
Թմփլիկի քէֆը նկատ, երբ լսեց, որ այդպիսի
պատուի է աշխատեցել — իր պատկերը նկարուել
է ուսումնարանի սեղանի վրայ:



Իսկ Տիգրանը շարունակեց.

— Ո՛հ, որչափ ծիծաղելի էր թո պատկերը:
Քիչ էր մնում ամենքս ծիծաղից կոտորուէինք:



Ուսուցիչը նկատեց
և... վաղը, ահա՛,
Արամը դասերից լե-
տու պէտք է մնայ
ուսումնարանում և
իւր սխալները այն
տեղ արտագրէ:

Այդ անկարելի
բան է, Տիգրան,
ասաց Թմփլիկը: Ա-
րամը վաղը դասերից լետու չէ կարող մնայ
ուսումնարանում. դիտես, վաղը շարաթ է, և նա
պէտք է հայրիկի հետ գնայ հօրեղբորս մօտ:



— Ի՞նչպէս չէ, պէտք է գնայ հօրեղբորս մօտ:
Արամը վաղը պէտք է մնայ ուսումնարանում,
լսում ես:

— Ի՞նչ վատ բան եղաւ, յսուեցաւ խոտի միջից Արամի ձայնը: X

Թմփլիկը ծանր կերպով ա՛խ քաշեց:

Այդ ի՞նչպէս կլինի, ասաց նա:

Արամը վաղը կամենում էր գնալ հօրեղբորս մօտ երկու ձի լծած կառքով, որ տեսնես, ի՞նչպէս լաւ են վազում այդ ձիերը:

Ախր, հայրս այնտեղ ամեն օր չի գնում, այլ այն ժամանակ, երբ միայն գործ ունի: Իսկ այնտեղ, հօրեղբորս մօտ, կարելի է խաղալ նըրանց երեխաների — Ռուբէնի և Նազիկի հետ: Այնտեղ տուն վերադառնալուց առաջ միշտ տալիս են խմելու մի մի լիք բաժակ կաթ: Իսկ չեստոյ էլի մի ամբողջ ժամ ձիով պէտք է տուն վերադառնան: Սալակի մէջ կարելի է պառկել մէջքի վրայ և սպասել մինչև որ տակից հարուած ստանաս: Երբ որ ճանապարհին պատահում է մի մեծ քօր, կամ ծառի մի հաստ արմատ, այն ժամանակ սալակը բարձր ու ցած է լինում ու միջի նստողները ընկնում են մէկը միւսի վրայ, ինչպէս ծիծաղելի և ուրախ է լինում այդ միջոցին: Արքան զուարճալի է ճանապարհ գնալը, իսկ հիմա այդ բոլորից զրկուելու է խեղճ Արամը:

Թմփլիկը էլի մի անգամ ախ քաշեց և, տըխուր հտածմունքի մէջ ընկած, գնաց առաջ ճագարների մօտ, իսկ չեստոյ գամը ձին տես

ներու: Նա շարունակ Արամի մասին էր մըտածում, որ խեղճը պատժուած է և այժմ խոտի մէջ պառկած լալիս է:

II



Ուսուցիչը երեկոյեան նստած էր տան առաջ, պարտիզում և դիրքը ձեռին կարդում էր, երբ նրա կնոջ օգնականը, փոքրիկ Մարթան, եկաւ և յայտնեց:

— Պարոն ուսուցիչ, մի տղայ է եկել և կամենում է ձեզ հետ խօսել:

— Թող գալ այստեղ: Երբ ուսուցիչը կարգաց մինչև վերջակէտը,

գլուխը բարձրացրեց և տեսաւ, որ ուղիղ իւր առաջ կանգնած է մի փոքրիկ տղայ, խնձորի պէս կարմիր և կլոր թշերով: Սա մեր Թմփլիկն էր:

— Ա, փոքրիկ, բարև, ասաց ուսուցիչը, բընելով նրա փոքրիկ ձեռքը:

Թմփլիկը շատ ամաշեց և չզիտեր ինչպէս խօսի:

— Դէ՛հ, փոքրիկ, ասաց ուսուցիչը, հարցրեց ուսուցիչը:

— Ես եկել եմ Արա... Արա... մի համար,
վերջապէս ասաց նա: X

— Ո՛վ է Արամը, հարցրեց ուսուցիչը: Ես
չատ տղաներ եմ ճանաչում, որոնց անունը
Արամ է:

— Արամը իմ եղբայրն է: Դուք հրամայել
էք, որ նա վաղը դասերից չետոյ ուսումնարա-
նում մնայ:

— Ա՛յ, թէ ի՞նչ:

Ուսուցիչը աշխատում էր մտաբերել:

— Այդպէս ուրեմն դու Արամի եղբայրն ես,
որ այսօր թանաքով աղտոտում էր ուսումնա-
րանի սեղանը:

— Այդ նա իմ պատկերն է նկարել, հպար-
տութեամբ վրայ բերեց Թ՛միլիկը: Արամը շատ
բաներ է կարողանում նկարել:

— Լա՛ւ, բայց չէ որ աշակերտներին արգե-
լուած է սեղանների վրայ նկարել:

Ուսուցիչը նայում էր շատ լուրջ:

— Պէ՛հ, ասա՛ տեսնեմ, իսկապէս դու ին-
չի համար ես եկել, բարեկամս:

— Ես եկել եմ, ես կարծում եմ, ես կամե-
նում եմ հարցնել, վաղը Արամը կարող է ար-
դեօք դասերից չետոյ տաւն գնալ... Այս անգամ
թոյլ տուէք... աւելի և աւելի ամաչելով, ասում
էր Թ՛միլիկը: Կքի պէտք է վաղը հարիկի հետ
գնայ հօրեւորը: Իսկ նա շատ ուզում է գնալ...

և հէնց այժմ սաստիկ լալիս է, որ պատժուած է:

— Այդ նա՞ է քեզ ինձ մօտ ուղարկել:

— Ո՛չ, նա ոչինչ չգիտէ իմ գալու մասին:

Իսկ ո՞վ գիտէ, հա՛յրդ:

— Ո՛չ:

Թ՛միլիկը զգում էր, թէ ինչպէս վախից նրա
սիրտը փորն էր ընկնում, որովհետև ուսուցիչը
սկսեց նրա հետ շատ լուրջ խօսել

Լսի՛ր, փոքրիկ, ասա՛, տեսնեմ, քո կարծի-
քով Արամը լաւ բան արեց, որ փչացրեց ու-
սումնարանի գեղեցիկ սեղանը, այդ դեռ բաւա-
կան չէ, նա ընկերների համար էլ վատ օրի-
նակ դարձաւ: Դէ՛հ, ասա՛ ի՞նչ ես կարծում,
լա՛ւ բան արեց Արամը:

— Ո՛չ, լսուեց մեզմ պատասխան:

— Դէ՛հ, էլ ի՞նչ ես ուզում: Եթէ մէկը
վատ բան է անում, պէտք է պատժուի, այն-
պէս չէ՞:

Թ՛միլիկը գլխով արեց:

— Ուրեմն Արամը պատժի արժանի է — շա-
րունակեց ուսուցիչը. իսկ եթէ նա վաղը մնայ
ուսումնարանում, փոխանակ հօր հետ հիւր գնա-
լու, այն ժամանակ նա այլևս այդպէս բան չի
անի, այնպէս չէ՞:

Թ՛միլիկը շարունակ գետնին էր նայում. Ու-
սուցիչը ուղիղ է ասում, շարութիւնը, ի հարկէ,
պէտք է պատժուի, սակայն, եթէ Թ՛միլիկը իս-

Handwritten note: ասել էլ չի կեց

Handwritten mark: K

քը լինէր ուսուցիչ, նա կընէրէր Արամին:

— Դէ՛հ փոքրիկ, մենք այլևս խօսելիք չունենք, այնպէս չէ՞:

Թմփլիկը լուռ էր: Նրան թւում էր, որ ուսուցիչը բարկացած է, և վախենում էր նրա հետ խօսել: Եթէ Արամի համար եկած չլինէր, նա վազուց թողել վախել էր իւր հասուլիկ կարծոտներով, X

Այդպէս ուրեմն Արամը վաղը պէտք է մնայ ուսումնարանո՞ւմ, ասաց նա երկար լուսթիւնից լետոյ:

— Ի՞նչ արած, պատասխանեց ուսուցիչը: Տեսնում է՞մ, դու բարի տղայ ես, որ եկել ես եղբորդ համար խնդրելու, բայց ես չեմ կարող ՚ներել նրան, թէ՛ և շատ խղճում եմ և Արամին, և՛ քեզ:

Այս վերջին խօսքերը լսելիս Թմփլիկը բարձրացրեց աչքերը և հարցական կերպով նայեց:

Ուսուցիչը Օսնիկին մօտեցրեց իրան և հարցրեւ.

— Դու շա՞տ ես խղճում եղբորդ.

— Այո՛, կակաղելով պատասխանեց Օսնիկը:

Նրա չրթունքները դողում էին, և արտասուքի երկու խոշոր կաթիլներ գլորւում էին նրա այտերից:

— Ես կըկամենայի, որ նա վաղը գնար հօրեղբորս մօտ, իսկ ես նրա փոխարէն կըմնամ ուսումնարանում:

— Դու կըկամենայիր... դու կըմնա՞ս վաղը այստեղ ժամը տասն և երկուսին, երբ սուր երեխաները գնում են տուն, երբ ամենքը խօսում են:

— Այո՛, դարձեալ գլուխը քաշ գցեց Թմփլիկը, բայց այս անգամ վստահ և ուրախ:

— Եւ դու կարո՞ղ ես արտագրել Արամի սխալները:

— Ես դեռ գրել չգիտեմ, ախ բաշելով պատասխանեց Օսնիկը, բայց ձողիկներ ես գրդէն գրում եմ, տառերից ես կերողանում եմ գրել միայն ր և ի, և մինչև անգամ կլոր օ:

Օսնիկը շփոթուած նայում էր: Մի՞թէ այսքանը բաւական չէ:

— Ես շատ կըգրեմ, պարոն ուսուցիչ, ես լաւ կըգրեմ:

Ուսուցիչը մի բոպէ մտածուների մէջ ընկաւ:

Լա՛ւ, ասաց նա: վերջապէս: դու անբան խնդրեցիր եղբորդ համար, և քանի որ սիրով համաձայնուում ես մնալ նորա փոխարէն, չեմ ուզում մերժել քո խնդիրը:

— Դէ՛հ, գնա՛, Աստուած քեզ հետ:

Ասա՛, Արամին, որ նա վաղը դասերից լետոյ կարող է տուն գնալ, իսկ դու, է՛հ, այստեղ և բեր հետդ քարետախտակդ և բարեգրիչդ: Լա՛ւ:

1007
32822



Թմփլիկը այս խօսքերը լսելիս այնպէս ուրախացաւ, որ ոչինչ չկարողացաւ պատասխանել, միայն սաստիկ ուրախութիւնից նրա երեսը կարմրատակեց:

— Կարող եմ այժմ տուն գնալ, հարցրեց նա վերջապէս:

— Այո՛, դեռ գնա՛, տուն մինչև վաղը: Դէ՛հ, տե՛ս, փոքրիկ, չմոռանաս վաղը անպատճառ արի ուսումնարան:



— Այո՛, այո՛, չեմ մոռանար, ցրտեսութիւն, պ. ուսուցիչ:

Թմփլիկը սեղմեց ուսուցչի ձեռքը և ուրախ ուրախ տուն վազեց:

Ուսուցիչը կանչեց նրա լեռերից:

— Է՛յ, փոքրիկ, մի ե՛կ, այստեղ, ուզո՞ւմ ես խնձոր ուտել:

Ո՛հ, շատ եմ ուզում:

— Դէ՛հ, վազի՛ր այգին և տես ծառի տակ խնձոր չկա՞: Թափուած:

— Կարելի է երկո՞ւսը վերցնել, հարցրեց Թմփլիկը:

— Այո՛, կարող ես: Ընտրի՛ր, երկու լաւ խնձոր և շուտով տուն վազիր, թէ չէ մայրիկը, ո՞վ գիտէ, չգիտէ որտեղ ես:

III

Եւ չիրաւի. ի՞նչպէս չվախենար մայրիկը, երբ ոչ ոք չգիտէր, թէ ո՞ւր է գնացել Թմփլիկը,

Տանեցիներից նրան ոչ ոք չէր տեսել: Նա ո՛չ տանն էր, ո՛չ բանջարանոցում, ո՛չ մարդպետնում և ո՛չ գոմում. նրան չգտան մինչև անգամ հարևանների տանը:

Բայց ահա՛, նա վերջապէս երևաց:

Վազում է թռչկոտելով, աղաղակելով և թափ է տալիս իւր հաստիկ թևերը:

Այս ի՞նչ է պատահել Թմփլիկին, որ այսպէս ուրախ է և տեսէր երկու ձեռքին էլ խնձոր կայ:

— Ո՞րտեղից ես գալիս, ո՞ւր էիր կորել — ամեն կողմից հարցրին նրան:

— Ես գնացել էի Արամի ուսուցչի մօտ, ասաց Թմփլիկը վազելուց հետո:

Արամը զաղը դասերից լետու կաշող է

տուն գալ, ուսուցիչը նրան թոյլ տուեց, իսկ ես նրա փոխարէն պէտք է գնամ ուսումնարան: Ինչ է, չէ՞ք հաւատում, աւելացրեց նա, երբ տեսաւ, որ ամենքը կասկածով են նայում նրա վրայ: Իսկ այս երկու խնձորը ես վերցրել եմ ծառի տակից, ուսուցիչը ինքը թոյլ տուեց.



մէկը ինձ համար է, իսկ միւսը Արամի: Մայրիկ, կըթողնես որ ուտեմ, սիրտս այնպէս խնձոր է ուզում ուտել, այնպէս ուզում է, որ էլ չեմ կարող համբերել, ասում էր նա խնդրաբար նայելով մօր վրայ:

— Կե՛ր, հոգեակս, կե՛ր այժմ կարելի է, ասաց մայրը, համբուրելով Օննիկին, բայց, տե՛ս, մէկից աւելի չուտես: Սակայն դու չպէտք է տանից ծածուկ փախչես, չգիտես որ մայրիկը անհանգիստ կըլինի:



Իսկ Արամը այդ միջոցին ուրախութիւնից ցատկոտում էր, սլառլա գալիս և վազվզում:

— Ա՛յ, կեցցե՛ս, Թմփլի՛կ, ինչ լաւ տղայ ես եղել, ասաց Արամը:

Թմփլիկին էլ ուրախութիւնից ծիծաղում էր և չգիտէր, թէ ինչ անի:

Արամը, երբ լիչեց, որ վաղը գնալու է հիւր իւր հօրեղբոր մօտ, ուրախութիւնից սկսեց այնպիսի ծամածուլութիւններ անել, որ Թմփլիկը սաստիկ ծիծաղից բոլորովին թուլացաւ և վայր ընկաւ:

Երբ որ տուն մտան Օննիկը իսկույն դուռը բարետախտակը, բարեգրիչը և սկսեց յարջ կերպով ձողիկներ գրել:

— Այդ ինչ ես նկարում, հարցրեց մայրը:
 — Չեմ նկարում, գրում եմ: Վաղը չէ՞ որ
 գնալու եմ ուսումնարան և այնտեղ պէտք է
 գրեմ Արամի փոխարէն:



Միւս օրը, երբ հայ-
 րիկը Արամի հետ ճա-
 նապարհ ընկան դէպի
 հօրեղբայրը, մայրիկն էլ
 գնաց զբաղուելու իւր
 տնային գործերով,
 Թմփլիկը հագաւ իւր
 մաքուր բլուզը, դրեց

նոր գլխարկը և քարետախտակը և քարեգրիչը
 պինդ բռնած ձեռքին, քայ-
 լեց դէպի ուսումնարան:

— Թող չկարծէ, որ ես
 հաստատ չմնացի խօսքիս,
 մտածում էր նա ինքն
 իրան:

Ուսուցիչը այդ միջոցին
 դբօսնում էր այգում:

— Պ. ուսուցչի, պ. ու-
 սուցիչ, գուռում էր Օսնիկը
 հեռուից ես գալիս եմ:

— Ես եկալ, ասաց
 Թմփլիկը, կանգնելով ուսուցչի առաջ



— Չէի սպասում, թէ կըգաս, կեցցես, փոք-
 րիկ Օսնիկ: Հը, խնձոր չե՞ս ուզում:

— Ա, մէկը բեգ, մէկը մայրիկիդ համար,
 իսկ այժմ նստենք և գրենք:

Թմփլիկը դեռ սկսեց ձողիկներ գրել, չետոյ
 գրեց բոլոր այն տառերը, ինչ որ գիտէր և
 վերջացրեց այն ժամանակ, երբ քարետախտակի
 երկու երեսն էլ գրեց, լցրեց:

Ուսուցիչը վերցրեց քարետախտակը, նայեց և
 գրեց «լաւ է» Յետոյ տուն արձակեց Օսնիկին:

Օսնիկը չէր գնում, այլ թռչում էր, երբ
 հեռուից տեսաւ մայրիկին, քարետախտակը ցույց
 տուեց և բարձր ձայնով կանչեց, «լաւ է, լաւ է»:

Վ Ե Ր Զ



9904131

W.P.
M

W

150

Հանրապետության

0004131

Հ. Գրադարան
Հ. Գրադարան

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004131

